

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«            »            2011 թ. թիվ ..... Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ  
 <<ՀԱՅԿԵՆՍԱՏԵԽՆՈԼՈԳԻԱ>> ԳԻՏԱԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ  
 ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՄԱՀՄԱՆԱՓԱԿ  
 ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆԸ ՄԱՄՆԱԿՑԵԼՈՒ  
 ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ կետի 6-րդ ենթակետի և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի դրույթները, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի <<Հայկենսատեխնոլոգիա>> գիտարտադրական կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպության գիտատեխնիկական մշակումների իրացմանը խթանելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է՝

1. Թույլատրել Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի <<Հայկենսատեխնոլոգիա>> գիտարտադրական կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպությանը (այսուհետ՝ <<Հայկենսատեխնոլոգիա>> ԳԱԿ) լատվիական <<FNG Invest>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակցությամբ ստեղծել «ԲԻՈԱՐՄ» ՍՊ ընկերություն՝ պայմանով, որ.

1) լատվիական <<FNG Invest>> ՍՊԸ-ը կկատարի մինչև 350 հազ. ԱՄՆ դոլարին համարժեք ներդրումներ՝ օպտիկապես ակտիվ ոչ սպիտակուցային ամինաթթուների պրեպարատիվ արտադրության համար անհրաժեշտ տեխնոլոգիական սարքավորումների և քիմիական ռեակտիվների ձեռքբերման համար, որոնք կտրամադրվեն <<Հայկենսատեխնոլոգիա>> ԳԱԿ-ին՝ անհատույց օգտագործման իրավունքով՝ մինչև համատեղ գործունեության ավարտը երաշխիքային ժամկետով.

2) օպտիկապես ակտիվ ոչ սպիտակուցային ամինաթթուների պրեպարատիվ արտադրությունը կկազմակերպվի <<Հայկենսատեխնոլոգիա>> ԳԱԿ-ի փորձաարտադրական կայանում,

3) միջազգային շուկայում արտադրանքի իրացման գործընթացները, ներառյալ մարկեթինգային և գովազդային ծառայությունները, արտադրանքի փաթեթավորումը, արտահանումը, անհրաժեշտ հումքի ներկրումը, կստանանի նոր ստեղծվող «ԲԻՈԱՐՄ» ՍՊ ընկերությունը:

Ա. Աշոտյան

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Թ - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

## ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ի և լատվիական «FNG Invest» ՍՊԸ-ն կողմից «BIOARM» ՍՊ ընկերության հիմնադրման մասին

ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնում (նախկինում՝ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության «Կենսատեխնոլոգիայի ԳՀԻ» ՓԲԸ) մշակվել է ամինաթթուների սահմանորիկ կենսամիմետիկ սինթեզի արդյունավետ տեխնոլոգիա և սինթեզվել են 100-ից ավելի նոր օպտիկապես ակտիվ ոչ սպիտակուցային (S)- և (R)- $\alpha$ -ամինաթթուներ, որոնց նմուշները սերտիֆիկացվել են միջազգային չափանիշներին համապատասխան: Սինթեզված ոչ սպիտակուցային ամինաթթուներից 17 անվանում արդեն ներգրավված է հանրաճանաչ բելգիական «ACROS ORGANICS» ֆիրմայի ընդհանուր ցանկում և վերջին հինգ տարիների ընթացքում դրանք պարբերաբար լաբորատոր քանակներով (5-100գ) արտադրվում և իրացվում են միջազգային շուկայում:

Վերջին ժամանակներս կտրուկ աճել է հետաքրքրությունը մեր կողմից սինթեզված ոչ սպիտակուցային ամինաթթուների հանդեպ: Մասնավորապես, «ACROS ORGANICS» ֆիրման մի շարք անգամ մեզ է դիմել որոշ ամինաթթուների արտադրության ծավալները մեծացնելու (մինչև՝ 1-120կգ) առաջարկությամբ: Նմանատիպ նախաձեռնությամբ են հանդես եկել նաև Iris Biotech GmbH, Bachem և այլ արտերկրյա ֆիրմաներ: Անշուշտ, արտադրության ծավալների հզորացումը պահանջում է առկա նյութատեխնիկական բազայի համալրում ժամանակակից փոքրածավալ (20-100լ) տեխնոլոգիական և սերտիֆիկացման սարքավորումներով, անհրաժեշտ քիմիական ռեակտիվներով և լուծիչներով:

Վերջերս «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնը ՄԳՏԿ CI-073 ապրանքայնացման ծրագրի շրջանակներում ձեռք է բերել որոշ սարքավորումներ (HPLC, GLC, էլեմենտային անալիզատոր, վակուում գոլորշիացման սարք, թորման սարքեր)՝ 434 հազ.ԱՄՆ դոլարի համարժեքով: Սակայն օպտիկապես ակտիվ ոչ սպիտակուցային ամինաթթուների լիարժեք փոքրածավալ արտադրության կազմակերպման համար դեռևս անհրաժեշտ են որոշ տեխնոլոգիական սարքավորումներ՝ քիմիական ռեակտորներ (20-50լ), իոնափոխանակային աշտարակներ, բյուրեղացման, ֆիլտրման, չորացման սարքեր, և այլն:

Վերոհիշյալի կապակցությամբ ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ ՊՈԱԿ-ը և լատվիական «FNG Invest» սահմանափակ պատասխանատվության ընկերությունը համաձայնության են եկել եվրոպական «BIOARM» համատեղ ձեռնարկության հիմնադրման մասին: Համատեղ ձեռնարկության շրջանակներում լատվիական «FNG Invest» ՍՊԸ-ը կկատարի մինչև 350 հազ. ԱՄՆ դոլարի համարժեքով ներդրումներ անհրաժեշտ տեխնոլոգիական սարքավորումների և քիմիական ռեակտիվների ձեռք բերման համար, որոնք կտրամադրվեն «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ին՝ օգտագործման իրավունքով՝ մինչև համատեղ գործունեության ավարտը երաշխիքային ժամկետով: Օպտիկապես ակտիվ ոչ սպիտակուցային ամինաթթուների պրոդուկտիվ արտադրությունը կկազմակերպվի «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ի փորձարտադրական կայանում հետևյալ հասցեով՝ 0056, ք.երևան, Գյուրջյան փ. 14: Միջազգային շուկայում արտադրանքի իրացման գործընթացները, ներառյալ մարկեթինգային և գովազդային ծառայությունները, արտադրանքի փաթեթավորումը, արտահանումը, անհրաժեշտ հումքի ներկրումը, կտանձնի համատեղ ձեռնարկությունը: Արտադրանքի իրացումից հետո անմիջապես համատեղ ձեռնարկությունը «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ի հ/հ-ին կփոխանցի արտադրանքի ինքնարժեքի գումարը, ներառյալ աշխատավարձը, տնտեսական ծախսերը, ՀՀ-ում քիմիական ռեակտիվների և լուծիչների ձեռք բերման ծախսերը և այլն: Արտադրանքի իրացման արդյունքում առաջացած շահույթը կբաշխվի կողմերի միջև հետևյալ չափաբաժիններով՝ 49% ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ ՊՈԱԿ-ին և 51% լատվիական «FNG Invest» ՍՊԸ-նը:

ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ի  
տնօրեն, ակադեմիկոս

Ա.Սադյան